Եւ բազում առ այսոսիկ պատուէրք։ Թուղթ եւս առ Փառակեցի և Ցրվնեցի Բարգուղիմէոս և Ստեփաննոս ազգայն ի պատասխանի թղթոց նոցին (որք միայն էին գրեալ առ սրբազան Վեհրն զպատասխանի)։ Դարձեալ ըստ նոյն բանից։ Եւ մեղադիր լինելով նոցին վասն ոչ լինելոյն ջատագով սրբոյ Աթոռոյս և օժանդակ նուիրակին, մինչ զհակառակաց ժողովարարսն անդէն նուիրակ անուանէին, և զսրբոյ Աթոռոյս նուիրակն յետագրել ջանային։ Եւ բազում վասն այսորիկ պատուէրք։

Թուղթ եւս առ սրբոյ Աթոռոյս նուիրակ Յովհաննէս վարդապետն, վասն վերաստացելոյ թղթոցն և նոցին որպիսութեանց եւ պատուէր արիանալ առ այն։ Առ որ եւ յղեցաւ չափ պարբոպի սրբոյ Աթոռոյս։ Եւ յորմէ վասն վերոստացելոյն պատուէրք։ Զորս ի միում պահարանոջ տուաք վերոյիշեալ Զաքարիա քահանային, զի ի Զամախու յղեսցէ ի Հաշտարխան ի ձեռն սրբոյ Աթոռոյս նուիրակ Յովհաննէս վարդապետին. ի նոյեմբեր ԺԵ։

ՇԱՐՔ ՀՆՈՒԹԵԱՆՑ ԱԶՈՒԱՆԻՑ

ՊԱՏՇԷՆՔ

Կոնդակաց Սիմէօն եւ Ղուկաս կաթուղիկոսաց որ ի տօմարս Սեւազբութեանց եղելոց ի մատենադարանի Ս. Էջմիածնի՝ ընդ համարօք 748, 749, 751, 752, 754, 759 եւ 760 եւայլն։

Թղթեանց համար	ԻՄԱՍՏ ԿՆՔԱԿԱՑՆ	Անք Տան	Թիւ Հայոց
	Ի Տօմարին ընդ համարաւ 748		
ՄՁԴ	Կոնդակ Սիմէօն կաթուղիկոսի առ Զամախու ժողովուրդն վասն արհամարհելոյ զԽրայել կաթուղիկոսն Աղուանից և ընդունելոյ զՅովհաննէս կաթուղիկոսն, որով և բանադրէ զԱռաջնորդ Իսահակ վարդապետն։	1766	ՌՄԺԵ
ՄՁԵ	Կոնդակ նոյնոյ առ Զամախու առաջնորդ Իսահակ վարդապետն վասն Սաղիանի վանից	1768	ՌՄԺԷ